ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. հունիսի 20-ից 22-ը Շվեդիայի Թագավորություն գործուղման արդյունքների մասին

2023թ. հունիսի 20-ից 22-ը Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմում տեղի ունեցավ Արևելյան գործընկերության (ԱլԳ) երիտասարդական աշխատաժողովը, որը համախմբում էր անդամ երկրներից մոտ 70 մասնակիցների: Աշխատաժողովը կազմակերպվել և ֆինանսավորվել է Եվրոպական հանձնաժողովի Հարևանության և ընդլայնման բանակցությունների գլխավոր տնօրինության (DG NEAR) և Եվրոպական Միության Շվեդիայի նախագահության կողմից:

Աշխատաժողովին մասնակցում էին ԱլԳ երկրների պետական պաշտոնյաներ և ԵՄ պաշտոնյաներ, Ազգային երիտասարդական խորհուրդների, քաղաքացիական հասարակության ընտրված կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Միջոցառման բացման խոսքում շեշտադրվեց այն միտքը, որ երիտասարդներին աջակցելը պետք է մնա ԱլԳ հիմնական մասը, և ԱլԳ-ն կշարունակի աջակցել երիտասարդներին EU4Youth ծրագրի միջոցով:

Բացման ելույթով հանդես եկավ Արևելյան գործընկերության դեսպան Քրիստինա Յոհաննեսոնը, որը ներկայացնում է Շվեդիայի նախագահությունը:

Այս տարի միջոցառումը ուներ երկու կարգախոս՝ «Ուժեղ ենք միասին» և «ԵՄ-ն երիտասարդների համար»:

Եռօրյա աշխատաժողովի ընթացքում տեղի ունեցավ «Երիտասարդների երկխոսության ըմբռնումը ԵՄ համատեքստում» թեմայով պանելային քննարկում, այնուհետև ներկայացվեց «Երիտասարդների մասնակցությունը ԱլԳ երկրներում. քաղված դասեր և առաջընթացի հնարավոր ուղի Արևելյան գործընկերության երկրների մասնակցության մասին» շնորհանդեսը:

Պանելային քննարկումներից հետո երկու օր տեղի ունեցան աշխատաժողովներ ներառական հասարակությունների և կայուն կանաչ Եվրոպա թեմաներով, որոնց ընթացքում մասնակիցները քննարկել են երիտասարդական երկխոսության հայեցակարգը և ընդգծել երիտասարդներին որոշումների կայացման գործընթացներում ներգրավելու կարևորությունը:

Աշխատաժողովը նաև միտված էր խթանելու քննարկումները երիտասարդության դերի վերաբերյալ՝ կլիմայի փոփոխության պայմաններում դիմակայունության բարձրացման և ներառական հասարակությունների ձևավորման գործում:

Մասնակիցները համաձայնեցին, որ երիտասարդական երկխոսությունը արդյունավետ և անընդհատ զարգացող ձևաչափ է, որը երաշխավորում է, որ երիտասարդության հեռանկարը դիտարկվի համապատասխան քաղաքականություններում և համապատասխան մարմինների կողմից: Այնուամենայնիվ, ԱԼԳ տարածաշրջանային մակարդակում երիտասարդական երկխոսության բովանդակալից ձևաչափի իրականացումը մնում է մարտահրավեր՝ ԱԼԳ երկրների միջև տարբերությունների և մասնակցության հայեցակարգի վերաբերյալ նրանց ընկալումների պատճառով: Շվեդիայի Առողջապահության և սոցիալական հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության պատասխանատու Էմիլիա Սեգերլինդը շեշտեց երիտասարդական երկխոսության միջոցով ստեղծված առաջարկությունների իրականացմանը հետևելու և վերահսկելու կարևորությունը, որպեսզի երիտասարդները զգան, որ իրենց ձայնը լսելի է:

Սեմինարներն ավարտվեցին թեմատիկ ենթախմբերով, որի ընթացքում ներկայացրել եմ ՀՀ համայնքներում իրականացվող երիտասարդական ծրագրերը, ինչպես նաև խոսել եմ այն հիմնական խնդիրների մասին, որոնք խոչընդոտում են համայնքներում երիտասարդների ներգրավմանը և երկխոսության ստեղծմանը:

Ներկայացրել եմ համառոտ ակնարկ վերջին տարիներին համայնքային երիտասարդության առջև կանգնած մարտահրավերների, դրանց միտված լուծումների և միջազգային կազմակերպությունների ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից համայնքներում իրականացվող ներառական և կանաչ կենսակերպին միտված ծրագրերի մասին:

Քննարկվեց Հայաստանում երիտասարդական հարթակներ ստեղծելու, ինչպես նաև գոյություն ունեցող, բայց փաստացի որևէ ակտիվություն չցուցաբերող երիտասարդական երկխոսության հարթակները խթանելու կարևորությունը:

Աշխատարանների քննարկումների արդյունքները ամփոփվեցին ըստ երկրների:

Հայկական պատվիրակության միասնական մոտեցումը ներկայացրեց Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումից Գրիգոր Երիցյանը՝ նշելով, մենք կարող ենք խոսել այն ամենի մասին, ինչ կարևոր ենք համարում երիտասարդների համար և առաջարկություններ պատրաստել իդեալական աշխարհի համար: Բայց եթե չկա նրանց քաղաքականության մեջ ընդունելու պատրաստակամությունը, ոչինչ չի ստացվի:

Հայաստանյան պատվիրակությունը որպես մոտակա նպատակ հնչեցրեց պատասխանատու պետական մարմնի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ հանդիպում կազմակերպելու անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա սահմանել հետագա քայլերը՝ թե ինչպես տեղայնացնել ԱլԳ երիտասարդական երկխոսությունը Հայաստանում:

Ավարտելով ԱլԳ երիտասարդական աշխատաժողովը՝ Շվեդիայի երեխաների և երիտասարդների կազմակերպությունների ազգային խորհրդի նախագահ Նուրա Բերրուբան մասնակիցներին թողեց մոտիվացնող ուղերձ. «ԱլԳ և ԵՄ միջև համագործակցությունը ոչ միայն ցանկալի է, այլև էական: Եկեք միասին աշխատենք՝ ստեղծելու տարածքներ, որտեղ երիտասարդները կարող են մասնակցել կայուն ապագայի կերտմանը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակական քայլեր իրականացնել ԱլԳ անդամ երկրներում ԵՄ երիտասարդական երկխոսությունը հնարավոր դարձնելու և խթանելու ուղղությամբ:

27 հոկտեմբեր 2022թ.